Հունիսի 1-ին Շիրակի մարզպետարանում տեղի ունեցավ Մարզի Խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին մարզի բոլոր համայնքների ղեկավարները, ՀՀ Մշակույթի նախարարի տեղակալ տիկին Արև Սամուելյանը, ,,Շանթ,, ,,Ցայգ,, ,,Գալա,, ,,Հ1,, ,,Ազատություն,, ,,Առավոտ,, ,,Շրջապատ,, ,,Ասպարեզ,, լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Մինչև նիստի օրակարգը ներկայացնելը Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը շնորհավորեց հունիսի 8-ին Շիրակի մարզում կայացած ընտրությունների արդյունքում ըստ նախնական տվյալների ընտրված և վերընտրված համայնքների ղեկավարներին: Ապա մարզխորհրդի նիստի օրակարգը մասնակիցներին ներկայացնելուց և հաստատելուց հետո զեկուցումներով հանդես եկան.
Մարզի համայնքների բյուջեների 2014 թվականի հինգ ամիսների սեփական եկամուտների կատարման մասին ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լ. Մարտիրոսյանը.

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2014թ. 5 ամիսների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 94.7%-ով, նախատեսված 706,219.7 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 668,455.5 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է - 37,764.2 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2014թ. 5 ամիսների բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2013թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	141,585.0	115,080.2	- 26,504.8	81.3
Գույքահարկ	228,293.6	241,590.6	13,297.0	105.8
Պետական տուրք	20,563.1	21,581.5	1,018.4	105.0
Տեղական տուրք	60,435.7	64,937.2	4,501.5	107.4
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	120,943.5	92,960.3	- 27,983.3	76.9
ա/ հողի վարձավճար	110,430.3	79,904.2	- 30,526.1	72.4
բ/ գույքի վարձավճար	10,513.3	13,056.1	2,542.8	124.2
Այլ եկամուտներ	134,398.7	132,305.7	- 2,093.0	98.4
Ընդամենը սեփական եկամուտներ	706,219.7	668,455.5	- 37,764.2	94.7

2014թ. 5 ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2013թ. 5 ամիսների փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 12.0% կամ ծավալային առումով 2013թ. համեմատությամբ ավել է հավաքագրվել 71,668.2 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2014թ. 5 ամիսներին նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Գյումրի	396,192.8	413,889.0	+ 17.696.2	104.5
2	Ախուրյան	121,089.8	90,706.9	- 30,382.8	74.9
3	Արթիկ	78,990.7	78,756.0	-234.7	99.7
4	Անի	48,688.8	39,906.0	- 8,782.8	82.0
5	Ամասիա	28,716.4	23,193.2	- 5,523.1	80.8
6	Աշոցք	32,541.3	22,004.3	- 10,537.0	67.6

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2014թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 67.6 %, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 70.9 %, կամ 2013 թվականի հանդեպ սեփական եկամուտների նվազումը տոկոսային առումով կազմել է 3.3%:

Մարզի թվով 27 համայնքներում նախատեսվածի հանդեպ 100% և ավելի բարձր ցուցանիշ են ապահովվել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ / **տես հավելված նո. 1/**

Ախուրյանի տարածաշրջանից՝ 100% և բարձր 9 համայնքներ

Արթիկի տարածաշրջանից՝ 100% և բարձր 7 համայնքներ

Անիի տարածաշրջանից՝ 100% և բարձր 3 համայնքներ

Ամասիայի տարածաշրջանից՝ 100% և բարձր 4 համայնքներ

Աշոցքի տարածաշրջանից՝ 100% և բարձր 4 համայնքներ

Մարզի քաղաքային համայնքները 2014թ. 5 ամիսների սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 104.5%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 84.0 %, կամ 20.5%-ի աճ, **Արթիկ** քաղաքը՝ 130.5%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 88.5%, կամ 42.0%-ի աճ, **Մարալիկ** քաղաքը՝ 95.9%%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 69.6%, կամ 26.3%-ի աճ:

Նշված համայքների կողքին, սակայն մարզի թվով 70 համայնքներ չեն ապահովել 2014թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 94.7%-ը, իսկ թվով 14 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը / **տես հավելված նո. 2**/, բացի դրանից Սալուտ համայնքը գրանցել է 0 արդյունք:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտների հիմնական ցուցանիշ համարվող հողի հարկի հավաքագրման մակարդակը 2014թ. 5 ամիսներին կազմել է 81.3%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել – 26,504.8 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2013թ. համեմատությամբ նվազել է 4.8%-ով, իսկ գումարային նվազումը կազմում է – 5,762.8 հազ. դրամ:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտներում նախատեսված գույքահարկի հավաքագրման մակարդակը 2014թ. 5 ամիսներին կազմել է 105.8%, կամ նախատեսվածից ավել է հավաքագրվել 13,297.0 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2013թ. համեմատությամբ աճել է 33.2%-ով, իսկ գումարային աճը կազմում է 60,170.4 հազ. դրամ:

2014թ. 5 ամիսների ընթացքում հողերի վարձավճար կատարվել է 72.4% -ով, կամ պակաս է գանձվել – 30,526.1 հազ.դրամ: Փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2013թ. համեմատությամբ նվազել է -2.5%-ով, իսկ գումարային նվազումը կազմում է – 2,062.8 հազ. դրամ:

Համայնքներում ստեղծվել է հարկատուների միջև պարտավորությունների կատարման անհավասարություն, դրանից բխող ամենատարբեր բացասական հետևանքներով:

Երկու հարևան, նույն աշխարհագրական դիրքը ունեցող, նույն հողի շերտը և կատեգորիան ունեցող, իրար հավասար համայնքներից մեկում հարկատուները բարեխղճորեն են կատարում իրենց հարկային պարտավորությունները, իսկ մյուս համայնքում պարբերաբար չեն կատարում իրենց պարտավորությունները:

Աշոցքի տարածաշրջանում՝ Սալուտ, Զորաշեն համայնքները սեփական եկամուտների կատարումը չի գերազանցել 49.6%-ի չափով, իսկ հարևան Փոքր Սարիար, Բաշգյուղ համայնքները 100.0-ից բարձր %-ով, Արթիկի տարածք՝ Վարդաքար համայնքը սեփական եկամուտների կատարումը չի գերազանցել 41.1%-ի չափով, իսկ հարևան Նոր Կյանք համայնքը 100.0-ից բարձր %-ով, Անիի տարածք՝ Լուսաղբյուր համայնքը սեփական եկամուտների կատարումը չի գերազանցել 61.5%-ի չափով, իսկ հարևան Շիրակավան համայնքը 100.0-ից բարձր %-ով, Ամասիայի տարածք՝ Զարիշատ համայնքը սեփական եկամուտների կատարումը չի գերազանցել 47.4%-ի չափով, իսկ հարևան Զորակերտ համայնքը 100.0-ից բարձր %-ով:

Համայնքների ղեկավարները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն հողի հարկի և հողի վարձակալական վճարների գծով եկամուտների ապահովման նոր մոտեցումների ձևավորմանը, որոնք ենթադրում են համայնքների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների առավել խիստ և արդյունավետ կիրառմանը:

2014թ. 5 ամիսներին մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան հատկացվել է ամբողջությամբ, այն կազմում է 1,574,310.1 հազ. դրամ:

2014 5 ամիսների ընթացքում մարզի համայնքների աշխատավարձերի գծով ընթացիկ պարտքեր չեն կուտակվել:

Մարզում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և ոռոգման համակարգերի նախապատրաստության մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի

աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մ. Մանուկյանը.

2014թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		**Աճ կամ նվազում /հա/**
		2013թ.	2014թ.կանխատեսվող	
1.	Հացահատիկ	42348	43399	**+1051**
	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	22643	24399	**+1756**
	գարնանացան գարի	19705	20000	**+295**
2.	Կարտոֆիլ	4219	4350	**+131**
3.	Բանջարեղեն	1666	1670	**+4**
4.	Կերային մշակաբույսեր	12600	13000	**+400**
5.	Տեխնիկական մշակաբույսեր	31	32	**+1**
		60864	**62451**	**+1587**

2014թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կավելանա շուրջ **1587** հա-ով:

Աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիր

2014թ. բերքի տակ ցանվել է 24399 հա աշնանացան ցորեն նախորդ տարվա 22957 հա-ի դիմաց՝ աճ 1442 հա: 2013թ. աշնանն ամբողջությամբ իրականացվեց **«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը», որի արդյունքում մարզում ցանվել է 4895 հա բարձր վերարտադրության ցորենի ցանքեր՝**

Սուպեր էլիտային վերարտադրության սերմացու 11.25տ, շահառու՝5, հող.՝45հա

Էլիտային վերարտ. աշն. ցորենի ցանքեր /7 հա եւ ավել/ սերմացու 120.15տ, շահառու՝38, հող.՝400.5հա

Առաջին վերարտ. աշն. ցորենի ցանքեր սերմացու 1335տ, համայնք՝73, հող.՝ 4450 հա

Համայնքների կողմից լուրջ թերացում է արձանագրվել 2011-2012թթ. և 2012-2013թթ. առաջին վերարտադրության ցորենի սերմացուի գումարների հավաքագրման ուղղությամբ: 2011-2012թթ. համայնքների կողմից չի հավաքագրվել շուրջ 29.6 մլն դրամ և 2012-2013թթ. 21 մլն դրամ՝ Այգաբաց 1.4 մլն դրամ, Մարմաշեն 1.16 մլն դրամ, Հովունի 0.88 մլն դրամ, Հոռոմ 0.8 մլն դրամ, Սպանդարյան 1.4 մլն դրամ, Վարդաքար 1.4 մլն դրամ, Փոքր Մանթաշ 1.4 մլն դրամ, Աղին 0.64 մլն դրամ, Իսահակյան 3.2 մլն դրամ, Լուսաղբյուր 0.7 մլն դրամ, Հայկաձոր 1.7 մլն դրամ, Ջիթհանքով 0,7 մլն դրամ, Սարակապ 1 մլն դրամ, Ողջի 1.2 մլն դրամ, Զույգաղբյուր 2.5 մլն դրամ, Փոքր Սարիար 0.32 մլն դրամ:

Նշված համայնքներին 08.05.2014 թվականին ծանուցվել է գումարների հավաքագրումը կարճ ժամկետում հավաքագրելու վերաբերյալ, բոլոր այն համայնքները որոնք չեն կատարել պայմանագրով նախատեսված պարտավորությունները կծանուցվեն ևս մեկ անգամ, որից հետո հարցի լուծումը կտրվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրեր

Շարունակվելու է «ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 971-Ն որոշմամբ ընդունված Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր»

Էլիտային վերարտադրության աշնանացան ցորենի ծրագիր

/7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող շահառուների/

<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման>> ծրագրի դրույթներին, չափորոշիչներին և պահանջներին համապատասխան 2014 թվականի աշնանը պայմանագրային հիմունքներով ծրագրում ընդգրկվել ցանկացող հողօգտագործողների նախնական ցանկ-հայտերը՝ տեղական սերմարտադրողներից գնվող ցորենի էլիտային վերարտադրության սերմացուի վերջնական պահանջարկը ճշգրտելու, սերմացուների գնումները ժամանակին կատարելու և ըստ գոտիների ցանքի ժամկետները հաշվի առնելով շահառուներին հատկացնելու համար:

Առաջին վերարտադրության աշնանացան ցորենի ծրագիր

/մինչև 3 հա ունեցող շահառուների/

2014 թվականի աշնանը շարունակվելու է նաև մինչև 3 հա ցորենի ցանք կատարել ցանկացող հողօգտագործողներին առաջին վերարտադրության սերմացուի տրամադրման ծրագրերը, որի համար համայնքների կողմից պետք է ներկայացվեն համապատասխան ցանկ-հայտերը:

Նշված ծրագրերի շրջանակներում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված մինչև ս/թ-ի հունիսի 28-ը:

Գարնանացանի սերմարտադրության ծրագիր

2014 թվականի գարնանացանի համար Շիրակի մարզի համայնքների կողմից հայտ է ներկայացվել հետևյալ գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ՝

	Ֆոնդ	Իրացվել է
Գարնանացան գարու սերմ	632.7 տ /1կգ 200դրամ/130 դրամ//	57.771 տ
Կորնգանի սերմ	20.0 տ /1կգ 370 դրամ/	45 տ
Առվույտի սերմ	57.03 տ /1կգ 1500 դրամ/	6.902 տ
Եգիպտացորենի սերմ	13.25 տ /1կգ 350 դրամ/	0.95 տ

ՀՀ Շիրակի մարզում 2014 թվականի աշնանը ցորենի և 2015 թվականի գարնանը յուղատու արևածաղկի, հատիկի եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագիր /3 և ավելի հեկտար/

Հանրապետությունում 2014 թվականի աշնանը ցորենի և 2015 թվականի գարնանը յուղատու արևածաղկի և հատիկի եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում, նշված մշակաբույսերի մշակությամբ զբաղվել ցանկացող 3 և ավելի հեկտար (առավելությունը տալով խոշոր հողատարածքներին) հողատարածք ունեցող բոլոր համայնքների տնտեսավարողների և հանրապետությունում մթերում ու վերամշակում իրականացնող կազմակերությունների միջև փոխշահավետ, պայմանագրերի կնքման դեպքում, մթերող և վերամշակող կազմակերպության կողմից տնտեսավարողներին պայմանագրային հիմունքներով կարող է տրամադրվել համապատասխան գյուղատնտեսական տեխնիկա, սերմացու, պարարատանյութեր, դիզելային վառելանյութ, թունաքիմիկատներ և բերքահավաքից հետո կազմակերպել արտադրված ամբողջ մթերքների մթերումը՝ երաշխավորված գներով և ժամանակին կատարել վճարումները:

Նշված ծրագրի շրջանակներում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված մինչև ս/թ-ի հունիսի 19-ը:

Գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրում

ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի թիվ 650-Ն որոշման շրջանակներում համայնքների համար լիզինգային պայմանագրով <<СК-5М-1 Нива эффект>> մակնիշի հացահատիկային կոմբայնի ներկրում:

Լիզինգային պայմանագրով գյուղատնտեսական տեխնիկա (հացահատիկային կոմբայն) ձեռք բերելու համար գործում են հետևյալ պայմանները՝

- Տարեկան դրույքաչափը 9-12 %
- Կանխավճար՝ առնվազն գնի 20 %
- Առավելագույն ժամկետը՝ 6 տարի
- Արժեքը 75-78 հազ. դոլար (տեղափոխման ծախսերից և պատվիրվելիք քանակից)
- Իրականացնող ՓՄՁ Շիրակի ԶԱԿ

Պարարտանյութերի և դիզելային վառելանյութի աջակցության ծրագրեր

2014թ. գյուղատնտեսական տարվա համար մարզի համայնքների կողմից հայտ է ներկայացվել՝

	Ֆոնդ	Իրացվել է
Ազոտական պարարտանյութ՝	**5631 տ /1 պարկը 6000 դրամ/**	**3000 տ**
Ֆոսֆորական պարարտանյութ՝	**595 տ / 1 պարկը 7000 դրամ/**	**ներկրվել է 60 տ**
Կալիումական պարարտանյութ՝	**465 տ /1 պարկը 7000 դրամ/**	**ներկրվել է 80 տ**
Դիզելային վառելանյութ՝	**4406600 լիտր**	**1606000 լիտր**

Կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերը արդեն ներկրվել են մարզ, բոլոր այն համայնքները, որոնք կկատարեն համապատասխան վճարումներ կստանան իրենց համապատասխան խմբաքանակները:

Ազոտական, կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ներկրումը շարունակվում է:

Ոռոգում

Ընդամենը ոռոգվող հողեր – 20104 հա
որից՝ վարելահող – 15084 հա
տնամերձ – 5020 հա

Մարզի ջրօգտագործողների հետ կնքվել է *11980* պայմանագիր *9650* հա ոռոգելու համար:

Ոռոգման համակարգում 10.06.2014 թվականի դրությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ոռոգման ցանցի մաքրում – 5.6 հազ. մ³
2. Ոռոգման ցանցի նորոգում – 0.038 կմ
3. Հիդրոտեխնիկական կառուցվածքների և ջրաչափական դիտակետերի նորոգում - 82 հատ
4. Պոմպակայանների նորոգում – 7 հատ
5. Շիրակի ջրանցքի վրա կատարվում են հիմնանորոգման աշխատանքներ, որի նախագծային արժեքը կազմում է 23 մլն. դրամ:

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը մլն մ³	Լցվածությունը առ 09.06.2013թ. մլն մ³	Լցվածությունը առ 09.06.2014թ. մլն մ³	Աճ/նվազում +/-
1	Ախուրյան	540	484.11	274.97	-209.14
2	Արփի լիճ	105	67.7	42.4	-25.3
3	Կառնուտ	22,6	14.28	15.13	+0.85
4	Սառնաղբյուր	4,8	2.04	1.9	-0.14
5	Վարդաքար	5	2.97	3.63	+0.66
6	Թավշուտ	6	3.4	3.45	+0.05
7	Մանթաշ	8,2	4.65	5.03	+0.38
8	Ջաջուռ	0.28	0.16	0.22	+0.06
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**691.88**	**95.2**	**71.76**	**-23.44**

3. Մարզի համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի մասին կրկին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լ. Մարտիրոսյանը.

Տեղական ինքնակառավարման մարմինները իրենց կարքների համար ապրանքների,աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացները պետք է իրականացնեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գնման գործընթացների կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվար 1-ը հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Մարզի գյուղական համայնքների կողմից խախտվել է գնումների պլանների հաստատման և հրապարակման պահանջները:Գնումների պլանները սահմանված ժամկետից ուշ հրապարակել են թվով 33 համայմք, իսկ 83 համայնքներ չեն հրապարակել:

Ինչպես նաև խախտվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնումներ կատարելու նպատակով կազմակերպված գման գործընթացների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվությունների գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելու ժամկետները և օրինակելի ձևերը:

Մեր կողմից ուսումնասիրվել են հրապարակման ենթակա տեղեկատվությունը արձանագրված խախտումն ու թերությունը տեղում շտկվել են, սակայն գործընթացը բավարար համարել չի կարելի:

Գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը, պատասխանատու ստորաբաժանումը, գնահատող հանձնաժողովը:

Հարկ է նշել, որ գնումների համակարգող ստորաբաժանման աշխատակիցները, պաշտոնատար և հրավիրված անձինք պետք է ընդգրկված լինեն լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցուցակում: Նշված ցուցակում անձինք ընդգրկվում են գնումների մասին Հայասատանի Հանրապետության օրենսդրության իմացության գնահատման նպատակով լիազորված մարմնի կազմակերպած քննությունը հաջողությամբ հանձնելուց հետո:

Սակայն մարզի համայքների ղեկավարների կողմից աշխատանքներ չեն տարվում որակավորված մասնագետներ ունենալու ուղղությամբ:

Անհրաժեշտ է գնումների գործընթացները կազմակերպել խստագույնս պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ի գիտաշխատող Լ. Եգանյանի և Հուշարձանների պաշտպանության մարզային տեսչության պետ Ավետիք Մելիք Սարգսյանի հաղորդումները Շիրակի մարզի հուշարձանների պահպանության վիճակի և առկա խնդիրների մասին, որոշվեց ներկայացնել համայնքապետերին մարզխորհրդի նիստի ավարտից 10 րոպե ընդմիջումից հետո:

Նիստն ամփոփեց Շիրակի մարզպետ պարոն Ցոլակյանը, ով այս անգամ ևս իր դժգոհությունը հայտնեց այն համայնքների ղեկավարներից, ովքեր անհասկանալի կերպով, ընտրվելիս պայքարում են ընտրվելու համար, իսկ աշխատելիս ոչ մի ջանք ու եռանդ չեն ներդնում իրենց ստանձնած պարտավորությունները կատարելու: Փորձում եմ հասկանալ

մեր վարչությունների պետերի ելույթներում հնչող խնդրելու մասը, այսինքն ես դրա բուն իմաստը հասկանում եմ, այ որոշ համայնքապետեր չեն հասկանում երևի, որ սեփական եկամուտների հավաքագրումն այն պարտականություններից մեկն ու կարևորն է, որի լիարժեք կատարման դեպքում կարելի է դրսից այլ ծրագրեր բերել, ինչպես շատ համայնքների ղեկավարներ են անում: 400 մետր խողովակի խնդիր են առաջ քաշում, գումարները հավաքագրեք, 400-ից շատ առեք, վերջին հաշվով այդ գումարները որ հավաքագրում եք, գնում է միայն ու միայն համայնքի բյուջե, պետությանը դրանից ոչ մի օգուտ չկա: Երկու հարևան համայնքների ցուցանիշներ, ընդհանրապես հեռու են տրամաբանությանը մոտ լինելուց, երբ մեկը պլանները կատարում է 100 և ավելի տոկոսով, մյուսը սկսում է պատճառաբանություններ ման գալ, թե ինչու գոնե պահանջվող ցուցանիշը չի ապահովում: -Հակված չեմ, որևէ մեկի հետ խոսել վարչարարության այլ տեսանկյունից, բայց եթե բանը հասնի դրան, ստիպված կլինեմ, գնացեք նորմալ աշխատեք ու ձեր ընտրողին հուսախաբ մի արեք, ելույթն ավարտեց Ֆելիքս Ցոլակյանը: